ՆԱԶԱՐ.– Բա՛, քեֆ սրա՞ն կասեն: (Սաքոյին) Գեադա՛, բաց արա դուռը:

ՍԱՔՈ.– (Բաց է անում եւ գալիս է ներս դրօշակով կանգնում Նազարի մօտ:)

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– (Ներս է մտնում նշանագգեստի գլխարկով եւ առանձին ձեւերով) Արքայից արքա, նազիր-վեզիրը, պալատականները ընդունելութիւն են խնդրում:

ՆԱԶԱՐ.– Հրաման եմ անում, որ ներս գան, (Սենեկապետը դուրս է ելնում: Ներս են գալիս նազիր-վեզիրը, զօրավարներ) Ի՞նչ կա, ի՞նչ էք իրար անցել:

ՆԱԶԻՐ.– Թագաւորն ապրած կենա: Ուրախացնում ենք ձեր արքայական սիրտը մեծ ուրախութեամբ: Անարգ թշնամին խորտակուած է:

ՆԱԶԱՐ.– Շատ լաւ բան է եղել, գեադա՞:

ՆԱԶԻՐ.– Քո ահեղավիթխար տեսքը որ տեսան՝ ոչնչացան: Տասը թագաւորն էլ սպանուած են պատերազմի դաշտում: Մեր քաջարի զօրքը. շնորհիւ քո թագաւորական խելքի, իմաստութեան եւ քաջութեան, անօրինակ գրոհով տապալեց թշնամուն:

ՆԱԶԱՐ.– Շատ լաւ բան է եղել, գեադա :

ՎԵԶԻՐ.– Կեցցե՛ թագաւոր քաջը:

ԲՈԼՈՐԸ.– Կեցցե՛ թագաւոր քաջը:

ՆԱԶԻՐ.– Թագաւո՛ր քաջ: Ժողովուրդն անհամբեր է երկնային երեսհարքդ տեսնելու: Աղաչում է, քո յաղթութեան այս մեծ օրը գոնէ մի անգամ երջանկացնես ժողովրդին եւ անձամբ դուրս գաս նրա ողջոյնը ընդունելու:

ՆԱԶԱՐ.– Լաւ: (Վեր է կենում եւ բարձրանում պատշգամբը. նրան հետեւում է Սաքոն դրօշակով:)

ՍԱՔՈ.– (Ժողովրդին) Թագաւո՛րը:

ԺՈՂՈՎՈՒՐԴ.– (Դրսից) Կեցէ՛ մեր քաջ թագաւորը:

ՆԱԶԱՐ.– (Ձեռքով նշան է անում ժողովրդին, որ լսեն) Շատ շնորհակալ եմ ժողովրդից:

ՆԱԶԻՐ ԵՒ ՄԻՒՍՆԵՐԸ.– (Արտասուակալելով) Ի՞նչ երջանկութիւն:

ԺՈՂՈՎՈՒՐԴ.– Կեցցե, կեցցե, Կեցցէ՛է՛է՛է՛, կեցցէ, կեցցէ, կեցցէ՛է՛է՛է՛:

ՆԱԶԱՐ.– Զօրքին եւ ժողովրդին ճաշ տուէք:

ՆԱԶԻՐ ԵՒ ՄԻՒՍՆԵՐԸ.– Ի՞նչ առատաձեռնութիւն,

ՆԱԶԻՐ.– Ո՛վ Ժողովուրդ: Մեր ողորմած թագաւորը ոչ միայն յաղթեց թշնամուն իր քաջութեամբ, այլեւ փայլեց իր առատաձեռնութեամբ: